

ՄԵՐ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՒ ՄԱՄԼՈՑ ՈՒ ԽՐԱԿԻՐՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ. «ԱԶԳԱԿ» ԼՈՅՍ ՊԻՏԻ ՉՏԵՍՆԷ ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, Տ ՄԱՅԻՍԻՆ: ՄԵՐ ՅԱԶՈՐԳ ԹԻԻԸ՝ ԵՐԵՔՇԱՔԹԻ, 9 ՄԱՅԻՍԻՆ:

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

1500 Լ.Մ. 730Գ ՏԱՐԻ, ԹԻԻ 47 (20510) ՇԱՐԱԹ, 6 ՄԱՅԻՍ 2000 10 ԷՁ

ԹԵՐԱՆ ԽՍՏՕՐԷՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ԿՈՒԼԻԵԻ ՄԵԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Թեհրան խստօրէն քննադատեց Ալլապէյ-ճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիէի այն յայտարարութիւնը, թէ իրանցի ազերիները չեն կրնար իրենց մարտնչի լեզուով թրքերէտով դասաւանդումներ կատարել: Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը կանչած է Իրանի մէջ Ալլապէյճանի դէտապարտ եւ անոր նկատողութեան յանձնած Կուլիէի «սակաւտարանատու եւ խառնակիչ» յայտարարութիւնը:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ ՀԱՆԳԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ ՈՒՂՂԵՆ ԲՈՒՈՐ ԿՈՂՍԵՐՈՒՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՅԱԶՈՐԴ՝ ՍԱՆՁԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ

Նախանցեալ կէս գիշերին եւոք ժամը շէն սկսեալ, իսրայէլեան օդուժը շրթալապերծեց յարձակումներու շարք մը Լիբանանի քաղաքային ենթակառուցիւն դէմ:

Ռմբակոծուեցան Պալլիմի եւ Տէյր Ամմար - Պրտտաուի ելեկտրակայանները (Պրտտաուիի ելեկտրակայանին մէջ վիրատուութեամբ պաշտօնեայ մը եւ նիւթական



Հրդեհ Պալլիմի ելեկտրակայանի մէջ, իսրայէլեան ռմբակոծումէն ետք:

ՔՈՅԻ ԱՆԱՆ ՀԵՌԱՁԱՅՆՆԵՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՐՈՒ

ԼԻԲԱՆԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄԱԿ ԶԵՏ ԹԻ 425 ԵՒ 426 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԱՆԽԱՓԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ԶԱՍԱՐ



Լահուտ եւ Հըս կը տեսակցին Թերի Լարսընի հետ:

Հանրապետութեան նախագահ Գոր. Էմիլ Լահուտ եւ վարչապետ Սելիմ Հըս երկէ ժողով մը եւս գումարեցին ՄԱԿի ընդհանուր քարտուղարի յատուկ պատուիրակ Թերի Ռոտ Լարսընի հետ:

Ազգային լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ նախագահ Լահուտ Լարսընի վերահաստատած է Լիբանանի սկզբունքային կեցուածքը, թիւ 425 եւ 426 որոշումներուն կառուցողութիւնը եւ պատրաստակամու:

Տար. ք. Էջ 10

Յ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԸ ՊԱՏՊԱՐՏԵ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

Հ. Յ. Դանակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն քննարկեց իսրայէլեան բռնարարները եւ դատաւարտեց Լիբանանի քաղաքայիններուն ու քաղաքային ենթակառուցիւն դէմ անոր օդուժին յարձակումները. եւ հրապարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը:-

«Հ. Յ. Դանակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն իստի կը դատաւարտէ իսրայէլեան վերջին բռնարարները, որոնք ուղղուած էին քաղաքայիններուն ու քաղաքային կենտրոնական կառուցներուն դէմ. եւ ցաւ կը յայտնէ այդ բռնարարներուն պատճառով մեծ քանակութիւն համար, որ ծանր վնասներ կը պատճառէ Լիբանանեան տրնտեսութեան:

«Ան նաեւ ամբողջական զօրակցութիւն կը յայտնէ Լիբանանի, եւ անոր դեկավարին նախագահ Գոր. Էմիլ Լահուտի կեցուածքին, որ կը պահանջէ Լիբանանեան հողերէն իսրայէլեան ուժերու ամբողջական հեռացում, մինչեւ միջազգայնօրէն ճանաչուած սահմաններ, առանց որեւէ նախապայմանի, ինչպէս նաեւ՝ Լիբանանեան գերիշխանութեան վերահաստատում Լիբանանի ցամաքային, ծովային ու օդային տարածքին ամբողջութեան վրայ, ՄԱԿի թիւ 425 որոշումին հիմամբ:

«Կ. Կոմիտէն միջազգային ընտանիքին կը պահանջէ աշխատանք տանիլ շրջանին պահովութիւնն ու կառուցողները երաշխաւորող խաղաղ, արդար եւ ամբողջական լուծումի մը հասնելու համար»:

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵ 5/5/2000 ՊԵՅՐՈՒԹ

վնասներ կրեցին անոր մերձակայ պետական վարժարան մը եւ բնակարաններ):

2:20ին, թշնամի օդուժը ռմբակոծեց Պալլապէքի հարաւը գտնուող մթերանոց մը, որուն քով կը գտնուի վառելիքի «Տիւ» կայարանը: Երկու կառուցները ամբողջովին քանդուեցան եւ նիւթական վնասներ կրեցին անոնց շուրջ գտնուող շէնքերը:

3:15ին թշնամի օդանավերը ռմբակոծեցին Շիրիա-Մասնա մայրուղին. Թասայիլի մօտ, եւ անոնց արձակած ռումբերը ճամբան փակեցին մեծ փոսով մը. բայց բանակի սակաւորներու օժանդակ

Տար. ք. Էջ 2

ՓՈՒՍԼՆՅԱՆ ՇՐՁՆԻ ՄԸ ՀԱՍԱՐ

ՌՈՒՍԻԱ ՉԵՉԵՆԻԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՄՈՍԿՈՒԱՅԷՆ ՊԻՏԻ ԿԱՌԱՎԱՐԷ

ՄՈՍԿՈՒԱ, 5 (ՌՈՅ-ԹԸՐՁ).- Ռուսիա Չեչենիան ուղղակի Մոսկուայէն պիտի իջիւն մինչեւ որ շրջանը կառավարելու համար

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱԿԱՆ ՊԼՈՔԸ ՄԱԿԷՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԷ ՊԱՐՏԱԴՐԵԼ ԱՐԴԱՐ ԵՒ ԱՄԲՈՋԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայկական երեսփոխանական պլոքը երեկ գումարեց ժողով մը եւ քննարկեց Իսրայէլի գործած բռնարարները. եւ դատաւարտեց անգլէն քաղաքայիններուն ու կենտրոնական կարեւորութիւններուն կողմէն կառուցներուն վրայ գործուած օդային յարձակումները: Պլոքը հրապարակեց հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Հայկական երեսփոխանական պլոքը կը դատաւարտէ թշնամի օդուժին վերջին յարձակումները, որոնք ուղղուած էին անգլէն քաղաքայիններուն ու կենտրոնական կառուցներուն դէմ. եւ ցաւ կը յայտնէ Լիբանանի տնտեսութեան կրած վնասներուն համար: Պլոքը կը յայտարարէ նաեւ, թէ կ'որդեգրէ նախագահ Գոր. Էմիլ Լահուտի գլխաւորութեամբ Լիբանանեան իշխանութեան բոլոր կեցուածքները, պահանջելով ՄԱԿի թիւ 425 որոշումին հիմամբ իսրայէլեան ուժերու առանց որեւէ նախապայմանի հեռացումը: Պլոքը նաեւ կը վերահաստատէ, թէ կառչած կը մնայ Լիբանանի գերիշխանութեան՝ իր ցամաքային, ծովային ու օդային տարածքներու ամբողջութեան վրայ:

«Այս առիթով, պլոքը ՄԱԿէն կը պահանջէ պարտագրել արդար եւ ամբողջական խաղաղութիւն մը. շրջանի կառուցողները պահպանելու համար»:

5/5/2000 ՊԵՅՐՈՒԹ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐՁԻՆ ՌԱՈՒՆՏԸ ԵՒ Ս ԱՒԱՐՏԵՑԱԻ ԱՌԱՆՅ ՈՐԵՒԷ ՅԱՌԱՋԻԱԿԱՑՔԻ

Պաղեստինցի գլխաւոր անազնաց Եասէր Ապտ Ռապպօ երկէ յայտնեց, որ Իսրայէլի հետ մէկ շարժուած յանակցութիւնները աւարտած են առանց յառաջիադացք արձանագրելու: Ապտ Ռապպօ աւելցուց, որ այս հանցրուանն այ աւարտած է, սակայն տարակարծութիւնները չեն փարատած տակալին: Ան ըսաւ, որ միակ յառաջիադացքը այն է, որ երկու պատուիրակութիւնները համաձայնեցան յառաջիկայ շարժուած մէջ վերստին հանդիպիլ, սակայն լրատուական ցանցերուն լուսարձակներէն հեռու:

Պաղեստինցի եւ իսրայէլացի պատուիրակներ մէկ շարժելի վեր բանակցութիւններ կը կատարէին էյլաթի մէջ: Բանակցութիւններուն մասնակցած էր ամերիկացի յատուկ պատուիրակ Տենիս Ռոս, որուն ներկայութիւնը, սակայն յառաջիադացքի մէջ չդրու բանակցութիւնները: Նիստերու աւարտին, Ռոս ըսաւ, որ երկու պատուիրակութիւնները յրճութեամբ քննարկեցին հարցերը եւ հաստատ կը մնան տարակարծութիւնները լուծելու եւ համաձայնութիւն մը գոյացնելու սկզբունքին վրայ:

Ռոս Հինգշարթի օր տեսակցութիւն ունեցած էր Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաքի հետ: Աւելին ուշ, ան տեսակցութիւն պիտի ունենար նաեւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի հետ:

Իսրայէլի հետ բանակցող պաղեստինեան պատուիրակութիւնը երկէ առտու պահանջած էր, որ հրկական պետութիւնը վերանորոգէ հողի փոխարէն խաղաղութեան սկզբունքին հանդէպ իր յանձնառութիւնը: Պաղեստինցիները պահանջեցին, որ Իսրայէլ այս խոստումը կատարէ յառաջիկայ շարժման վերսկսելիք բանակցութիւններու նիստին առաջ: Ապտ Ռապպօ դիտել տուաւ, որ Իսրայէլի ներկայացուցած քարտկանները անընդունելի կը մնան եւ թէ մինչեւ յառաջիկայ հանդիպում իսրայէլեան պատուիրակութիւնը նոր առաջարկներ պէտք է պատրաստէ:

Իսրայէլ որեւէ հակադարձութիւն չունեցաւ պաղեստինեան պահանջին գծով:

(ՌՈՅԹԸՐՁ)

ԶՕՐԱՎԱՐ ԳՐՈՅԻ ԱՃԻԻՆՆԵՐԸ ԿԸ ՓՈՒՍԿՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Կր տեղեկանանք, որ ընթացքի մէջ է գործարար Դրոյի աճիւններուն Միացեալ Նահանգներէն Հայաստան տեղափոխումը, եւ անոր առթիւներ՝ գինեւորական ուսմանց յարձարայուն վարժարանի մը հիմնումը:

Հայաստանի մէջ ստեղծուած է պետական պաշտօնական յանձնաժողով, որուն մաս կը կազմեն պաշտպանութեան նախարարը, Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչը եւ պաշտօնական այլ անձնակորուցիւններ:

Մայիսի վերջերուն պատուիրակութիւն մը պիտի մեկնի Քէյմպրիձ, Միչիգուսէյց, Գոր. Դրոյի աճիւնները Հայաստան տեղափոխելու համար: Աճիւնները Երեւան կը հասնին Մայիս 28ին եւ կ'ամփոփուին Բաշ Ապարանի ճակատամարտի դաշտին մէջ, Կիրակի Մայիս 28ին, հուն կանգնած յուշակոթողին կողքին:

Այսպէս, յետ մահու, Գոր. Դրաստամատ Կանայեան պիտի ստանայ արժանի գնահատական իրրեւ ազգային հերոս եւ Հ. Յ. Դանակցութեան նպատակը եւ գործը մարմնակորոզ գործիչ: Անոր յիշատակը պիտի յաւերժանայ Հայրենիքին մէջ:

Տար. ք. Էջ 9

ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾԱՄ ԿԵՐԱՐԵՐՈՂ ՈՐԵՒԷ ՓԱՍՏԱԹՈՒՂՈՒ ՆԿԱՏԻ ՊԻՏԻ ԱՌՆԷ ԶԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ՍԿԶՐՈՒՆԸ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոյէրթ Քոչարեան յայտարարեց, որ Լեւոնային Ղարաբաղի տագնապին լուծման վերաբերող որեւէ փաստաթուղթ նկատի պիտի առնէ կողմերուն հաւաստութեան սկզբունքը, ինչպէս նաեւ քաղաքացիներու անվտանգութեան միջազգային երաշխիքներ:

Գերմանիայի խորհրդարանի պատուիրակութեան հետ Հինգշաբթի օր ունեցած իր հանդիպումին ընթացքին, նախագահ Քոչարեան յայտնեց, որ ԵԱՀԿ Մինսքի իմբակի համահայտարարութեան վերջին առաջարկը Լեւոնային Ղարաբաղի եւ Ազրբայճանի միջեւ

«ընդհանուր պետութիւն» կազմելու մասին. նկատի կ'առնէ ինչպիսի սկզբունքները: Ան արդիւնաւէտ նկատեց Ազրբայճանի նախագահ Հայտար Ալիեւի հետ իր ուղղակի հանդիպումները, որոնք նպատակ ունենան լուծելու դիպլոմատիկ խնդիրներուն յստակեցումը:

(ԻԹԱՐ - ԹԱՍՍ)

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՉՈՒՄ ԶԱՄՆՐ

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ՍԿԱՄ ԻՐ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԶԵՏ

ԵՐԵՒԱՆ, 5 (ԱՐՄԷՓՐԷՍ).- Երեւանի քաղաքապետ Ալլապէյ Բազեան յայտնեց, որ ճիշդ պիտի ըլլայ, եթէ Ազգային ժողովի մեծամասնութիւնը կազմող խմբակցութեան ներկայացուցիչը կամ անոր մօտին նկատուող անձ մը նշանակուի վարչապետ, որպէսզի հակասութիւններ չառաջանան Ազգային ժողովի մեծամասնութեան եւ կառավարութեան միջեւ:

Բազեան հաստատեց այն լուրերը, թէ Երկրպագ կամաւորականներուն Միութեան վարչութիւնը կը գումարէ ժողովներ, որոնց ընթացքին կը քննարկէ ներքին քաղաքական իրավիճակը: Ան սակայն նշեց, որ վարչութիւնը տակալին միասնական մտնցում չէ ձգլած:

Ուժի միջոցով հարցերը լուծելու կարելիութեան մասին հարցումի մը պատասխանելով, Ա. Բազեան ըսեց, որ մէջ կան շատ զգաստ անձեր, որոնք նմանօրինակ քայլերու չեն դիմեր:

Միւս կողմէ, Հայաստանի նախագահ Ռոյէրթ Քոչարեան Ուրբաթ, Հայաստանի անդամակցութիւնը հիմնական հարցերէն մէկն է Երեւանի քաղաքական ուղեգիծին:

Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի իրական հարցերու մարդկային իրաւունքներու յանձնաժողովի գեկուցաբեր Միխայիլ Շփինտեյկեթի հետ Ուրբաթ օր իր հանդիպումին ընթացքին, նախագահ Քոչարեան յայտնեց, որ «Եւրոպական արժեքները կը կազմեն այն հիմքը, որոնց վրայ մենք կ'ուզենք կառուցել մեր երկիրը»:

Հանդիպումին քննարկուեցան Եւրոխորհրդի անդամակցելու գծով Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններուն առնչուող հարցեր:

ԵՐՈՒՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՍԿԶՐՈՒՆԲԱՅԻՆ ԶԱՐՑ Է ԶԱՅԱՍԱՆԻ ԶԱՄԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ

ԵՐԵՒԱՆ, 5 (ԱՐՄԷՓՐԷՍ).- Հայաստանի նախագահ Ռոյէրթ Քոչարեան յայտնեց, որ Եւրոխորհրդի Հայաստանի անդամակցութիւնը հիմնական հարցերէն մէկն է Երեւանի քաղաքական ուղեգիծին:

Եւրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի իրական հարցերու մարդկային իրաւունքներու յանձնաժողովի գեկուցաբեր Միխայիլ Շփինտեյկեթի հետ Ուրբաթ օր իր հանդիպումին ընթացքին, նախագահ Քոչարեան յայտնեց, որ «Եւրոպական արժեքները կը կազմեն այն հիմքը, որոնց վրայ մենք կ'ուզենք կառուցել մեր երկիրը»:

Հանդիպումին քննարկուեցան Եւրոխորհրդի անդամակցելու գծով Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններուն առնչուող հարցեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱԿԱՆ ՊԼՈՔ

Տար. ք. Էջ 10

ԹՈՒՐԵՒՅԻՆ ԶԱՐԿԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՕՏԻՆ ԱԵԶ

ԲԱԽՈՒՄ ԹՐՔԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԵՒ ՔԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

ՏԻԱՊԵՔԻՐ, 5 (ՌՈՅԹԸՐԸ) - Թուրքիոյ հարաւարեւելեան գօտիին մէջ Հինգշաբթի գիշեր բարձր մարտերի ունեցած է թրքական ուժերուն եւ ՔԱԿԻ անդամ գինեակներու միջեւ: Ըստ թրքական աղբիւրներու, քիւրտ 7 ռմբոստ սպաննուած է: Յստակ չէ, թէ բանակը կորուստներ ունեցած է:

Միւս կողմէ, ապահովութեան մարզի պաշտօնատարներ յայտնած են, թէ հարաւարեւելեան Հասանքէֆ քաղաքին մօտ սպաննուած քիւրտ երկու ռմբոստներու դիակներ գտած են: Յստակ չեղաւ, թէ ո՞վ սպաննած է գանդը:

ՔԱԿ կ'ըսէ, թէ Թուրքիոյ մէջ ինքնավարութեան ի խնդիր գինեակ պայքարէ հրաժարած է ի նպատակ մշակութային իրաւունքներու լողիլիկի:

Թուրք պաշտօնատարներ կը յայտնեն, թէ այս կեցածքը մարտավարութիւն է ՔԱԿԻ կողմէ:

ԶՈՒԻՑԵՐԻՎԱԿԱՆ ՄԵԾ ԴՐԱՍԱՏՈՒՆԵՐ ԿՈՐՈՇԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԳՐԵԱՆԵՐՈՒ ՊԱՏԿԱՆՈՂ ԴՐԱՍԱԳՆՈՒՆԵՐԸ

ՅԻՒՐԻՄ, 5 (ՌՈՅԹԸՐԸ) - Զուիցերիական մեծ դրամատուներ Ուրբաթ օր յայտարարեցին, որ մօտ օրէն պիտի լուծուի հրեաներու պատկանող դրամագումարները իրենց տէրերուն վերադարձնելու հարցը:

Երէք դրամատուները համաձայնութիւն մը պիտի գոյացնեն վերադարձնելու համար մօտաւորապէս 1.25 միլիարտ տոլար, որ հրեաներու կը պատկանի եւ որ Երկրորդ Աշխարհամարտին նացիներու կողմէ իրացուած է Զուիցերիոյ դրամատուներուն մէջ պահուած: Հրեական համաշխարհային շարժումներ երկարատեւէի վեր կը հետապնդեն այս հարցը՝ պահանջելով, որ գումարները վերադարձուին իրենց արդար տէրերուն: Դրամատուներուն ներկայացուցիչները Հինգշաբթի օր հանդիպում մը ունեցած էին հրեաները ներկայացնող փաստաբաններու հետ, Նիւ Եորքի մէջ: Հանդիպումի աւարտին, դրամատուներու ներկայացուցիչները յայտնեցին, որ համաձայնութիւնը գրեթէ գոյացած է եւ թէ միայն մանրամասնութիւնները պիտի եզրակացուին: Անոնք կը յուսան, որ յառաջիկայ մէկ ամսուան ընթացքին համաձայնագիրը ստորագրուի:

Մ. ՆԱԿԱՆԳՆԵՐ ԿԱՆԽԱՐԱՍ ԿԸ ՆԿԱՏԵՆ ԼԻՊԻՈՅ ԸԵՏ ԱԵԼԻ ՍԵՐՏ ԿԱՊԵՐՈՒ ԸԱՍՏԱՏՈՒՄԸ

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը հերքեց, որ Ուաշինկթըն կ'ուպէտեւի սերտ կապեր հաստատել Լիպիոյ հետ:

Արտաքին գործոց նախարարութեան Մերձավոր Արեւելքի բաժանմունքի գլխաւոր պատասխանատուներէն Ռոնալտ Նիւմէնը խոսեց Լիպիոյ մասին: Արտաքին գործոց նախարարութեան Մերձավոր Արեւելքի բաժանմունքի գլխաւոր պատասխանատուներէն Ռոնալտ Նիւմէնը խոսեց Լիպիոյ մասին: Արտաքին գործոց նախարարութեան Մերձավոր Արեւելքի բաժանմունքի գլխաւոր պատասխանատուներէն Ռոնալտ Նիւմէնը խոսեց Լիպիոյ մասին: Արտաքին գործոց նախարարութեան Մերձավոր Արեւելքի բաժանմունքի գլխաւոր պատասխանատուներէն Ռոնալտ Նիւմէնը խոսեց Լիպիոյ մասին:

բեկչութիւնը եւ Կորստի միջոցով անոր, ինչպէս նաեւ ամբողջական գործակցութիւնը ցուցաբերել Լիպիոյ հետ:

Լոքսթրաքի երկու լիպիացի ամբաստանաւորները դատավարութեան յանձնելով՝ Լիպիոյ քաղաքացի արարմէն ըսաւ, որ Ուաշինկթըն տակաւին ահաբեկչութիւն հովանաւորող երկիրներու շարքին կը դասէ Լիպիոն եւ ներկայիս կապերը սերտացնելու ծրագիրներ չունի, հակառակ անոր, որ Լիպիոյ դատավարութեան յանձնած է Լոքսթրաքի երկու ամբաստանաւորները: Նիւմէնը աւելցուց, որ Ուաշինկթըն կը նկատուի, որ կարգ մը հարցերու գծով դրական քայլեր առնուած են, քայցեւայնպէս տակաւին գոյութիւն ունի որոշ երեւոյթներ, որոնց գծով եւս Լիպիոյ պետք է վերադառնալ Լիպիոյ մէջ իր կեցուցածը:

Միւս կողմէ, Հոյանտայի մէջ կը շարունակուի երկու լիպիացիներուն դատավարութիւնը: Պաշտպան փաստաբանները կը փորձեն հաստատել, որ Լոքսթրաքի վերէն շահաբաշխուած օդաչուները եւս կը կիրարկուին Լիպիոյ դէմ հաստատուած պատժամիջոցներ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՇԽԱՏԱՌԱԿԱՆՆԵՐԸ ՆԱՀԱՆՋ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԼՈՆՏՈՆ, 5 (ՌՈՅԹԸՐԸ) - Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր գգուշացումի ապտակ մը ստացաւ Ուրբաթ օր, երբ ընդդիմադիր կուսակցութիւնները մեծ յաղթանակներ ապահովեցին քաղաքացիական ընտրութիւններուն եւ Քէն Լիպիոյ վերջին օրերուն ղեկավարութեան հետ թարկէ իր կեցուցածը:

Ան դիտել տուաւ, որ Լիպիոյ պետք է ենթարկուի ՄԱԿի Ապահովութեան Նորհուրդի պահանջներուն, որոնց հիման վրայ Թրիփոլի հատուցում պետք է տայ Լոքսթրաքի վերէն պայթած ու շարժախուած օդանաւին վրէժներուն ընտանիքներուն: Լիպիոյ պետք է դատապարտուի ահաբեկչութիւններուն ղեկավարութեան հետ թարկէ իր կեցուցածը:

Պլէր խոստովանեցաւ, որ Աշխատաւորական կուսակցութիւնն ու ինք ղապտակ ունին սորվելիք այս արդիւնքէն: Պլէր աւելցուց, որ ընտրութիւններուն արդիւնքը ցոյց կու տայ, որ փոքրամասն շատ աւելին կը պահանջէ կառավարութեանէն: Խոսելով Լիպիոյ վերջին ընտրութեան մասին, Պլէր ըսաւ, որ պիտի գործակցի անոր հետ՝ լաւապէս վարելու համար Լոնտոնը: Պլէր այս յայտարարութիւնը կը կատարէր հակառակ անոր, որ չի բաժնոր Լիպիոյ վերջին ձախկողմեան տեսակէտները: Լիպիոյ վերջին ընտրութիւնները, յոյս յայտնեց, որ պիտի կարենայ լուծել տարակարծութիւնները իր եւ Աշխատաւորական կուսակցութեան կարգ մը թեկնածուներուն միջեւ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱԶԳ. «Լ. ԵՒ Մ. ՅԱԿՈՒԵԱՆ» ՔՈՒԼԵԻ ՏԻԿԱՆՑ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ ԻՐ ԳՈՐԾՈՒԵԼՈՒԹԵԱՆ 15ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ «ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ» Նախագահութեամբ ՏԻԿԻՆ ԱՆԺԵԼ ՍԱՊՈՒՆՃԵԱՆԻ Կը բանախօսէ ԾԱՀԱՆԻՈՒԽՏ Կ'երգէ սիրուած երգիչ ԱՐԱՐԱՏ ԱՀԱՐՈՆԵԱՆ Մասնակցութեամբ ԾԱՆԹ ՏԻՇԶԵՔԷՆԵԱՆԻ եւ իր նուագախումբին Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 9 Մայիս 2000, կէսօրէ տուաջ ժամը 10:00Են սկսեալ, Թաւրթալի «Աթլալ Փլազա» նաշարանին մէջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՅ Լիբանանահայ Արուեստագէտներու Համախմբումին Տրանսահայ Արուեստագէտ - Լուսակաթիչ ԱՆԹՈՒԱՆ Ա.ԿՈՒՆԵԱՆԻ հետ (Մահիկներու ցուցադրում) Երկուշաբթի 8 Մայիս 2000, Երեկոյեան ժամը 7:30Ին Garden Tower, Անթիլիաս:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ 2000ԱՍԵԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԱՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ծննդեան 2000ամեակի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետի նախաձեռնութեամբ Ղաթի, Ասորի եւ Հայ եկեղեցիներու պետերու նախագահութեամբ եւ մասնակցութեամբ, կրօնական յատուկ արարողութիւն պիտի կատարուի Երկուշաբթի 8 Մայիս 2000, կէսօրէ ետք ժամը 5:30Ին, կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Անթիլիաս: Արարողութեան ընթացքին պիտի օրհնուին Լիբանանէն, Սուրիայէն եւ Եգիպտոսէն բերուած խունկ, հող եւ ձիթէնի ճիւղեր: Պիտի կատարուի նաեւ հոգեհանգրստեան յատուկ արարողութիւն երէք եկեղեցիներու վախճանեալ երանաշնորհ կաթողիկոսներու եւ պատրիարքներու հոգիներուն համար: Կոչ կ'ուղղուի մեր թեմի սիրեցեալ ժողովուրդին, խումներամ բազմութեամբ ներկայ գտնուելու եւ հաղորդուելու կրօնական այս բացառիկ արարողութեամբ: ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ST. MARC ԿԵԴՐՈՆԸ ՕԺՏՈՒԵՑԱԻ CT. SCANԻ ԱՐԴԻԱԿԱՆ ԲԱԺԻՆՈՎ ՄԸ ԲԱԺԻՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱՅ Է ԱՐԴԷՆ ՍԷՆ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԸԷՆՔԻՆ ՄԷՋ (Նախկին կեդրոնէն 50 մետր առաջ) Հեռաձայնի նոր թիւեր: 01-566633 - 576565 - 582658

ADVANCED DENTAL IMAGING IN ST. MARC DIAGNOSTIC CENTER, ZALKA - 885829 JETAWI - 582658 Superior Image Quality with INSTRUMENTERIUIM IMAGING

«ՄԻՐՈՅ ԺԱՅՐԸ» ԱԵՐՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԷ ԱՆԴԱՍԱԼՈՒԾԵԼՈՎ ԳԱՍԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄԻԼԻՈՆԱՒՈՐ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշխարհի համակարգչային ամէնէն ծանրակշիռ հետմանքներու պատճառով ժառիրը, որ «Միւրոյ ժառիր» կոչուած է, անցնող երկու օրերուն աշխարհի տարածքին համակարգչային միլիոնաւոր դրութիւններ անդամալուծած է: Մինչ անիկա երէկ կը շարունակէր արեւելք գործել՝ նոր ինքնութիւններու ետին պահուրտելով մասնագետներ կը կողմնացնէին, թէ այս ժառիրը շատ աւելի վնասակար է քան անցեալ տարուան Մելիսա ժառիրը եւ թէ տակաւին անիկա կրնայ աւելի եւս ծանրակշիռ արեւելք գործել: «Քըմփիլոթըր Լիստիլթըր» ընկերութեան ապահովութեան արտադրութիւններու բաժանմունքի պատասխանատուներէն Ֆրանսիս Լատիլթըր թղթակիցներու յայտնեց, թէ կ'անկախուի ժառիր յաւելեալ տարբերակներ տեսնել:

Ան անհամաձայնակալ նկատեց, որ ժառիրը յառաջիկայ երկու շաբաթէն առաջ «արմատախիլ» ըլլայ: Սակայն ֆինլանտական հակաժառիր ընկերութիւն մը ըսաւ, թէ անիկա մինչեւ Երկուշաբթի օր կրնայ անհետանալ: Աշխարհի տարածքին տնտեսական կորուստները երէկ արդէն աւելի քան մէկ միլիարտ տոլարով կը գնահատուէին:

Ժառիրը ի - մէյլներու մէջ ի յայտ կու գայ իբրեւ «Այ - Լաւ Ետ» ներգրասելով եւ հրահրելով գործածողները, որ նամակը բանալ պարպապէս անդամալուծելով անոնց ի - մէյլի դրութիւնները: Անոր մէկ տարբերակը «ճոք» բառը կը գործածէ:

«Միւրոյ ժառիր», որ ֆինլանդական «ժագու» ունի, Հինգշաբթի օր յայտնաբերուած է եւ քանի մը ժամուան մէջ աշխարհի մեծագոյն ընկերութիւններուն ստիպած է, որ իրենց ի - մէյլներու դրութիւնները փակեն: Անիկա թափանցած է նաեւ Փենթակոն եւ Բրիտանիոյ խորհրդարանը:

Ֆինլանդականներու ռատիկականային աղբիւրներ ըսին, թէ «Միւրոյ ժառիր»ը ստեղծողը կրնայ ըլլալ 23 տարեկան տղամարդ մը, որ Մանիլայի արտարձաններէն մէկուն մէջ կը բնակի: Քննութիւն բացուած է անոր շուրջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹԱԼԵՊԱՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՆԱԽԱՅԱՐՁԱԿ ՉԸԼԼԱԼ ԸՆԴԴԻՍԱԳԻՐ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԷՄ

ԻՍԼԱՄԱՊԱՏ, 5 (ՌՈՅԹԸՐԸ) - Աֆղանիստանի իշխող իսլամական թալեպան շարժումը, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ ճնշումի կ'ենթարկուի, որպէսզի դրամ չվատնէ պատերազմական ծախսերու վրայ, Ուրբաթ օր յայտարարեց, որ նախայարձակ պիտի չըլլայ ընդդիմադիր ուժերուն դէմ, որոնց հակակշիռին ենթակայ է երկիրին տասր առ հարիւրը: Սէուդական Արաբիոյ մէջ յառաջիկայ շաբթուան ընթացքին տեղի ունենալիք խաղաղութեան բանակցութիւններուն մասնակցող թալեպանի պատուիրակութեան առաջնորդը՝ Ամիր Խան Մուլթաֆի, շեշտեց որ իսլամական շարժումը պիտի չըլլայ նախայարձակ: Ան ըսաւ նաեւ, որ չշատ լաւատես է կ'են կը նախատեսէ կը Սէուդական Արաբիոյ մէջ տեղի ունենալիք բանակցութիւնները յառաջխաղաղ արձանագրելու: Մուլթաֆի չըսաւ, սակայն թէ թալեպանն ու ընդդիմադիր ճակատը ինչպէ՞ս պիտի կարենան լուծել տարակարծութիւնները եւ համաձայնութիւն գոյացնել՝ վերջ տալու համար քսանամեայ տագնապին:

Մուլթաֆի եւ թալեպանի մէկ այլ ներկայացուցիչը՝ Ապտուլհաքիմ Մուլթաֆի շեշտեցին, որ ստար ուժեր կ'օժանդակեն ընդդիմադիր ճակատին եւ կը գինեն անոր ուժերը: Մուլթաֆի եւ Մուլթաֆի կ'ըսեն, որ յատկապէս Անկախ Հասարակապետութեան երկիրները կ'օժանդակեն եւ կը գինեն ընդդիմադիրները, որոնք իրենց կարգին կ'ըսեն, որ Փաքիստան գորավիզ կը կանգնի թալեպանի:

Միւս կողմէ, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը մտահոգութիւն յայտնեց այն տեղեկութիւններուն մասին, ըստ որոնց Աֆղանիստանի հակամարտ կողմերը կը պատրաստուին գինուրակական նոր գործողութիւններու: Ապահովութեան Խորհուրդի նախագահ Ուսան Ենկիֆան ըսաւ նաեւ, որ անդամ երկիրները գգուշացումի հրահր ուղղեցին հակամարտ կողմերուն, որ ինքնագոյութիւն չեն եւ գինուրակական նոր գործողութիւններու չձեռնարկեն:

ԳԱՍԱԿԱՐԳՉԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԾՇՏԱԿԱՆ ՔՈՒԼԵԾ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՅ (Ի նպատ սաներու ֆոնտին) Կազմակերպութեամբ ԾՆՈՂԱՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ Տեղի կ'ունենայ Շաբաթ, 13 Մայիս 2000, Երեկոյեան ժամը 9:00Են սկսեալ, CASINO ARRABI մէջ, Պապուտա (Hypermarket Abou-Khalil) վերջին յարկը: ԳԵՂԱՐՈՒԹԵԱՆԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ՍԱԿ՝ 255

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԷՏՔ Է ՅՍՏԱԿԵՑՆԻ ԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ'ԸՍԷ ՄՈՂՍՄԷՏ ՖԱՐՀՍ ԲՈՒԷՅԻ

Ներքին նախարարի պարզապես ինչպե՞ս է ինչպե՞ս լինի՞ր, քարոզչական: Այո՛, հարցը ես ստույգ չեմ կարող դասել: Այո, որ ասում են՝ թրքախոսների համաժողով, այնքանով, որ ես տեղեակ եմ, ազգերի-ները ցեղային առումով արիացիներ են եւ խոսակցական լեզուի հարցը երկրորդական ընդլծվել է կրում (*): Այն առումով, որ Պաքուին ինչ խնդիր է հետապնդում, դա իմ պարտականություն չէ, որ տեսակէտ չափանում: Այն իմաստով, որ որեւէ քարոզիչ ցանկանալ հրահրել չըջանի ռազմարեւոյ, իմ կարծիքով՝ դա ճիշդ գործ չէ, որովհետեւ այդ պարագայում հիմնական տուժողները ժողովուրդներն են ու պետությունները: Մեր համոզմամբ, ինչպէս էրանի իսլամական Հանրապետության մեծագույն նախագահ պարոն ինթիլիան է անգամներ շեշտել չըջանի երկրորդի առաջնակարգ սկզբունքը պէտք է համարուի տագնապների վերացումը՝ իր բուն իմաստով, եւ հարկաւոր է տագնապների վերացման խնդիրը նայել ոչ-մարտավարական հայեացքներով, որովհետեւ խնդիրները եւ բախումները հրահրումը այդ երկրների համար աւերիչ է լինելու:

Հ.- Պրն. ցեղական, դու՛ր որպէս Իրանի Խալաֆաթի Հանրապետութեան լիազոր ներկայացուցիչը Հայաստանում՝ Իրան - Հայաստան փոխգործակցութեան հարցում զործրկարգում ի՞նչ առաջնահերթութիւններ կ'ունենան ու ներկայումս ամենակարգ, մշակութային եւ բարոյական քննադատներով:

Պ.- Որպէս այդ հարցումի պատասխան՝ պիտի ասեմ, որ նախ եւ առաջ պէտք է այդ հարցի վերաբերեալ կողմերի պատրաստակամութիւնը յստակեցնել: Այսինքն՝ Հայաստանի պէտք է յստակեցնել իր շրջանային ծրագրային առաջնահերթութիւնները եւ նոյնպէս ճշդ որոշի զրանք պիտե՞՞ական, ազգային անվտանգութեան շրջանակներում եւ Իրանի հանդէպ իմ մտեցումների խնդրում: Այդ հարցը որոշման պատասխանելով կարծիքով պէտք է պարզի Հայաստանը: Այն, ինչ որ մենք որպէս փորձառութիւն ունենք, սա է, որ երկու երկրների փոխարարութեան ինքնները այս տարիներում ընթացել են ընդհանուր հունով, եւ ներկայիս ականատես ենք յարաբերութիւնների որակական աճին: Ես երկու կառավարութիւնների պետական մակարդակով չհիմնադրելի դաշտի ընդլայնումը կարելու խնդիրները մէկն են՝ համարում, որով պէտք է հետեւել ազգային ունենալով այն կացութիւնը, որ ներկայիս շրջանային ապահովութեան բնույթով հիմնական հարցն են արժանութեւն: Ինչպե՞ս որ երկու երկրները որեւէ տնտեսական եւ ինչպէս ասած՝ քաղաքական գործընթացը երկու երկրների միջեւ պայմանագրում է փոխադարձ ապահովութեան եւ կայունութեան առկայութեան: Այդ կապակցութեամբ մենք ակնկալում ենք երկու երկրների եւ երկուսի պաշտօնատարներին, բանկցութիւններին եւ տեսակէտների փոխանակման աշխատանքների ծաւալումը, որը, ի դէպ, ստույգ է երկուստեք ականառու բարիկամեցողութեամբ եւ ցանկանում ենք, որ մեր միջեւ երկկողմ համագործակցութիւնների ապագայ ընթացքը առաւելու աշխատութեան ենթակալ լինի: Հաշուի առնելով Հայաստանում իրականացված փոփոխութիւնները, որոնք ընդհանուր կարգաւորութեան կազմակերպումը, այն համոզմունք ունենք, որ Հայաստանը պէտք է յստակ կերպով յայտարարի իր ընդունակությունը, թէ ինչ մակարդակ եւ ինչ տեղ է վերապահում Իրանի հետ փոխարարութիւններում:

Մենք Իրանում ունենք այն պատրաստակամութիւններ, որ մեր բոլոր հարեան երկրներին հետ շարունակելու բարեկամական երկկողմ յարաբերութիւնները: Հայաստանն այդ առումով յստակ եւ իւրաքայտուկ տեղ ունի մեր քաղաքականութիւնների մէջ, եւ մտածում ենք, որ այժմ հասունացած է բազմակողմանի համագործակցութիւնների փուլը:

Հ.- Ի հետևում մի ձևով ասում պատասխաններին՝ կարելի է ունենալ այն հետախնդր, որ ապագայում Իրանի կողմից նախագահական մակարդակով կալանաւոր իմամբարդուրի ու ղեկավար Հայաստան: Ինչպե՞ս գիտե՞՞ք: Այդ մակարդակով այցելութիւնները միակողմանի են եղել եւ Հայաստանի կողմից նախագահը միջնադարի ակումբում այցելել է Իրան:

Պ.- Ի հարկէ, կատարուած այցելութիւնները տեղի են ունեցել շրջանի ընդհանուրներ լուծման եւ վերացման շրջանակում: Եւ դա մի հարց է, որ պայմանաւորուած է յարաբերութիւնների որակային ընթացքի հետ: Հաւատում ենք, որ երկու երկրների պաշտօնատարների հանդիպումները ծաւալման գծով, ինչպէս նախորդ հարցի պատասխանում նշեցի եւ հիմա էլ կրկնում եմ, մենք հանդիպումների ընդլայնմանը վերաբերում ենք որպէս մի հիմնական առաջնա՝ առաւել մտեցնելու համար երկու երկրների տեսակէտները, որոնց խորացումը նպատակաւոր ընդդրուած է շրջանային խաղաղութեան եւ բարոյութեան կայացմանը: Պաշտօնատարների փոխադարձութեան հարցում կան ծրագրեր, որոնք պէտք է կարողացողները: Պատրաստակամութիւնը երկու երկրների կողմից գրեթէ գոյութիւն ունի եւ մտածում եմ, որ աւելի կապուած է ժամանակին եւ քիմիկալ հարցերին: Կարծում եմ, թէ ինչպե՞ս որ շրջանը ղէպի տագնապների վերածումը ընթանալ չփուլների մակարդակի գաղափարի հաւանութիւնն էլ կ'աւելանալ:

Միւս կողմից, մենք ունենք հարեան երկրների ռազմավարութիւն, եւ Հայաստանն էլ մաս է կազմում այդ ռազմավարութեանը՝ որպէս մի մնայուն եւ մշտական հարեան: Գու՛մարած դրան՝ ես չեմ կարծում, թէ ինչ որ խաղեր եւ ինչ որ ծրագրեր մշակողներ, որոնք խոսում են «Կոսովո, 2, 3» նախագծերի կամ այդ կարգի հարցերի մասին, կարողանան օգտակարութիւն ունենալ: Ինձ թւում է, թէ հեռուոր երկրների որոշ պաշտօնատարներն էլ յաւատեղեակ են որոշ տեսակէտներին անհեթեթութիւնները: Մեր արտաքին քաղաքականութեան առաջնային սկզբունքը համարուող տագնապների վերացման մոտիկ շրջագծում յստակ տեղ է վերապահուած Հայաստանին: Մենք հաւատացած ենք, որ Հայաստանը կարող է վերածուել մի ուղու՝ Հիւսիսի եւ Հարաւի առաւել կայի համար, եւ միաժամանակ եւրոպական կարեւոր նախագծերի հիմնական առաջնային մաս կազմելով՝ լաւ դեր ստանձնել շրջանում, ինչպիսիք են՝ ԹԻՒԱՍԵԿԱ կողմից միջնացքի նախագծում, որը միջ եւ լիցք միջնացքների խնդիրն է շտապում: Միւս կողմից, ինքը Հայաստանը համագործակցութեան ծաւալման շրջագծում կարող է ազդեցիկ դեր ունենալ:

Այլ խոսքով՝ այն, ինչ Հայաստանը որպէս փոխադարձ համարման քաղաքականութիւն՝ կիրառում եւ հետեւում է իրրեւ առաջնա, տարբեր չափերով բխում է արտաքին քաղաքականութեան ընտելում իր յաղողութիւններից եւ այդ առնչութեամբ մենք յոյս ունենք, որ որդեգրած այդ ուղին արդիւնաւորուի անկախութեամբ, միասնականութեամբ եւ շրջանային անվտանգութեամբ ու կայունութեամբ: Այդ կապակցութեամբ մենք մեզ հովանաւոր ենք համարում: Մենք լիովին ծանօթ ենք Հայաստանի այսօրուան ունեցած (աշխարհառաջնակարգական) տարողութեան եւ որակին եւ իմ անձնական տեսակէտով՝ թւում է, թէ շրջանը առաւել կարիք ունի մի շրջանային հաւաքական անվտանգութեան, որպէսզի կարողութիւնն ունենալ նախագծելու համագործակցութիւնների իրականացումը:

Հ.- Փոխադարձ համարումը մտնելով՝ ի՞նչը կ'ուստի ունէ՞ք:

Պ.- Այդ հարցը առաջ է բաշել Հայաստանի արտաքին գործոց նախարար պարոն Օսկանեանը, որը արտայայտել է թէ՛ Ազգային փողոկաւ, եւ թէ՛ Բանակցութիւնների ոլորտում եւ թէ՛ մամուլի ասուլիսներում: Այդ խնդիրը անշուշտ է Հայաստանի ընտրութեանը: Իմ տեսակէտով, փոխադարձ համարման հարցը դասակարգման կարիքն ունի: Ի հարկէ, դա իմ անձնական կարծիքն է: Պէտք է բոլոր շրջաններում հետեւել շրջանային համագործակցութիւնների փորձընթացին եւ արագութեամբ եւ ի վերջոյ գորակցել փոխադարձ եւ ճշմարիտ ըմբռնման կայացմանը:

Հ.- Որպէս վերջին հարցում: Կր խնդրի ձեր արտաքին յայտարարութիւնը փոփոխութեան լիազորութեանը որպէս մուստատանի նախագահի ու այդ ընտրութեան հետագայ այցելութիւնների մասին: Երբ ունենալու է բարոյական իմաստով շրջանում եւ ի մամուլի կողմից տարածում: Ձեր կարծիքով՝ այդ փոփոխութեան տարածման երկրները ի՞նչ կ'ընդունեն:

Պ.- Ի հարկէ, ես Թուսաստանի Դաշնութեան խնդիրների փորձագէտ չեմ, որպէսզի փիլիսոփայ լինեմ մասնագիտական խորագնին տեսակէտ յայտնել այդ մասին: Թուսաստանի ներքին քաղաքական անպարզ գում պրն. Փութիլի գործի գլուխ անցնելով՝ մեր երկրի եւ Թուսաստանի դիւանագիտական պատասխանատուների միջեւ հանդիպումներ կայացան եւ համագործակցութիւնների հիմնադրումն ու խորացումը երկու երկրների կողմից էլ շեշտուեց: Այն մասին, որ Թուսաստանի վարելիք քաղաքականութիւնը կ'ովկասում ինչպիսին է լինելու, իմ կարծիքով, դա մի հարց է, որին պէտք է պատասխանեն Թուսաստանի պաշտօնատարները՝ իրենք:

Մտաւոր յիշողութեամբ՝ մենք Չեչենիայի խնդիրը ունէ՞ք, որի վերաբերեալ Իրանի վարած քաղաքականութիւնը հիմնուած էր այն լուծման մտակներ վրայ, որոնք փոխադարձ համագործակցութեան եւ խաղաղասիրական միջոցների վրայ էին շեշտը դնում: Համոզուած ենք, որ Հարաւային Կովկասն էլ այդ ոլորտից դուրս չի գտնուում, եւ պիտի որ կողմերի համագործակցութիւնը նախկին համաժողովուրդների փոխադարձութիւնն ու կարողականութիւնը:

Համոզուած ենք, որ շրջանի մտապատկեր վերաբեր է պէտք է ջանալու օգնել, որ այդ վերաբեր ենթագիտակցութիւնը չյարատեւի, եւ յատկապէս քաղաքատնտեսական ասպարէզներում համագործակցական մտայնությունը պէտք է ջանալու ապագայի համար նպաստաւոր հող պատրաստել:

«ԱԼԻՔ»

(*) Հաստատար կ'ակնարկէ Իրանի մասում ունեցող լրատվութիւնը (է Ազգային):

ՀԱՐԱՋՐՈՅ ԱՆԳԱՐԱՅԻ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԿԻՆԱՍ ԱԲՊԱՅԻ ԸՏՏ

ԿԻՆԱՍ ԱԲՊԱՅ. «ՅԱՆԿԱՅԱՑ ԽՆԴԻՐ ՀՆԱՐԱՒՈՐ Է ԿԱՐԳԱՒՈՐԵԼ ՄԻԱՅՆ ԵՐԿԻՕՍՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ»

Ստորեւ տրուած հարցազոյցը լրջա տեսած է «Երկիր» օրաթերթի 3 Մայիսի թիւի մէջ: Անգարայի համալսարանի նախագահ Կինալ Աբպայ Մայիս 2ին Երեւանի մէջ ստորագրեց գործակցութեան համաձայնագիր մը Երեւանի Պետական Համալսարանի տեսուչ՝ Ռ. Մարտիրոսեանի հետ: Այս առիթով Հ. Յ. Պ. «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական Միութիւնը կազմակերպեց բողոքի ցոյց մը ԵՊՀի մուտքին («Ազգակ», 2 Մայիս):

Յստակ է, որ Կինալ Աբպայի քայլը ամբողջովին կը ծառայէ իր երկրի եւ պետութեան շահերուն՝ հայագետներու պատրաստութիւն, հայերու եւ Հայաստանի ուսումնասիրութիւն, յարուածութեան ճանաչում եւ «բնական» յարաբերութիւններ, հայ անհատներու հետ ուղղակի կապեր եւ... գործակալներու պատրաստութիւն: Մինչդէռ, ԵՊՀ-ը կը զիջի առաջն նախապայմանի եւ առանց անդրադառնալու հայ ազգային ռազմավարութեան առանցքին՝ Հայկական Յեղափոխութեան: Տակաւն, կարելի է բացատրել հայ առեւտրականի շահագրգռածութիւնը Թուրքիոյ հետ յարաբերութիւններով. բայց, ի՞նչպէս հասկնալ հայ մտքի կեդրոնը ըլլալու կողմէ ԵՊՀի տեսուչի ապագային գործունէութիւնը. արդեօք պետական քաղաքականութիւնը քաջալեր է այս նախաձեռնութեան:

Յատկանշական է թուրք տեսուչին հայասեր եւ քաղաքակիրթ երեւնալու կեղծ ճիգը. նախքան Անգարայի կիսաւեր եկեղեցիին հնուրդ հայկական գրադարանի վերածելը պէտք է ընդունել հայ մշակութիւնի 4 հազարամեայ գոյութիւնը պատմական Հայաստանի հողերում վրայ եւ ճանչնալ Հայկական Յեղասպանութիւնը: Այս մտեցումը, որ կը ծագի ջնջել Հայկական Յեղասպանութեան իրականացումը, քաղաքական եւ ազգային երեսները եւ պայմանաւորեցին անցեալ դէպքերու սովորական պատմութեան, պէտք է մերժել, ըստ ամենայնի:

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Աբպայ, ի՞նչ նպատակով էք այցելել Երեւանի Պետական Համալսարան:

Պ.- Մենք իմ կինալեան եւ իմ երկու համալսարանների միջեւ համագործակցութիւններ սկսելու կ'ուստի ունէ՞ք: Այս փոփոխութեան համար մենք կ'իմանանք Երեւանի Պետական Համալսարանի օգնութեանը: Այս օրերի մենք ծանօթացանք երաժշտական, բժշկական համալսարանի, գիւղատնտեսական ակադեմիայի գործունէութեան եւ համոզուած ենք, որ փոխադարձ շփումների շտապը բարդ է կտել: Մեր համալսարանը համագործակցում է աշխարհի 70 երկրների տարբեր համալսարանների հետ: Ման համագործակցութիւնների կ'իմանալու նպատակը տեսել երկրի մշակութիւնը եւ պատմութեանը ծանօթանալը, ինչպէս նաեւ ուսանողների, դասուսուցիչի եւ գիտնականների փոխադարձութիւններն ու համատեղ աշխատանքներ ծաւալել: Սա ոչ միայն օգտակար է համալսարանների, այլ նաեւ երկու երկրների միջեւ յարաբերութիւնների կազմում համար: Ցանկացած ինչի ինքնուրու է բարգաւորել միայն երկուստեքեան միջոցով, որը հայ-թուրքական յարաբերութիւններում բացակայում է:

Ես առաջին թրքական համալսարանի նախագահն եմ, որ քաջ է կատարում երկու երկրների միջեւ երկուստեքեան սկսելու եւ առաջին հերթին մեր գիտնականների միջոցով գոյութիւն ունեցող ինչի ինքնուրու գաւորելու ուղիւն:

Հ.- Ի՞նչ նպատակների է ծառայելու հայագիտութեան ամփոփումը Թուրքիայի համար:

Պ.- Մեր համալսարանում դասուսուցչոււմ է 35 օտար լեզու: Հայագիտութեան ամփոփումը բացուել է մէկ տարի առաջ: Մենք վաղուց ենք շփում Հայաստանի հետ, իսկ այդ դէպքում հայերին աւելի մ'օտարակցեցին հաշիւ շտապեւր եւ մեզ համար: Ամփոփումը բացելու կ'իմանալու նպատակն այն է, որ մեծ կարիք է զգացում Հայաստանի հետ ամեն բնագաւառում համագործակցութիւն սկսելու: Հայերի եւ թուրքերէն տարբերակ մենք աւելի մ'օտարակց կարող ենք ճանաչել միմեանց:

Հ.- Ինչո՞ւ դուք համաձայնագիր ստորագրեցիք ոչ միայն Երեւանի Պետական Համալսարանի, այլ նաեւ երաժշտանոցի ղեկավարութեան հետ:

Պ.- Մեր համալսարանում բացուել է երաժշտական բաժանմունք, սակայն մենք իյիստ կարիք ենք զգում արհեստավար մասնագետների: Հրաւիրել ենք տարբեր երկրների մասնագետներին, որոնք չեն բաւարարում մեզ համար անհրաժեշտ կամանջները: Երաժշտանոցում ունեցողները կ'ուսուցանեն, որը մեզ չափազանց դուր եկաւ: Պարոն Մմբատեանի հետ կ'ընդունել մասնագետների փոխանակման եւ փոխադարձ համագործակցութեան մասին համաձայնագիր: Մենք այցելել ենք Երեւանի Պետական Համալսարան, քանի որ դա Հայաստանի ամենամեծ համալսարանն է եւ, նրա հետաւորութիւնները շատ աւելի մեծ են:

Հ.- Հայ-թուրքական յարաբերութիւններ որպէս այդպիսին չեն եղել: Դա պայմանաւորուած է կ'իմանալու՝ երկու երկրների միջեւ արդէն վաղուց գոյութիւն ունեցող նպատակաւոր ինչի ինքնուրու: Արդեօք ք ծեր այցելութիւնը կարող է նպաստել այդ խնդրի կարգաւորմանը:

(Շար.ը՝ էջ 6) «ԵՐԿԻՐ»

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼԸ՝ ԸՆՅԱԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«ՆԱՏԱՐ» ԹԵՐԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՅԱԲԵԼՈՒԱԾՐ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՎԱՅ ԳԱՏԻՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱՎԱՅ ՎԱՍՍԱՅՆՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Անցեալ քանի մը շաբաթներուն ընթացքին, ինչպէս լիբանանեան թերթերու քաղաքական բաժինները, նոյնպէս անոնց լաւելուածները անդրադարձան Հայկական Ցեղասպանութեան 85ամեակին:

Այս ծիրէն ներս լիբանանեան «Նահար» թերթի երկրասարգական լաւելուածը երկու հանգրուանով տեղ յատկացուց այս թեմային: Առաջին հանգրուանին (Երեքշաբթի, 18 Ապրիլ), լոյս տեսան երկու յօդուածներ: Առաջին յօդուածին խորագիրն էր «Հայկական Հարցին արմատները. աշխարհագրութեան անեծքին եւ պատմութեան կուտակումներուն միջեւ» (յօդուածագիր՝ դոկտ. Անրուան Հըքիմ), իսկ երկրորդ յօդուածը «Պետութեան վերականգնումը չի շնչեր անցեալի վտանգները. համաշխարհայինացումը կը միացնէ Հայկական Սփիւռքի ուժերը...» խորագիրը կը կրէ (յօդուածագիր՝ դոկտ. Անրուան Մէյֆ):

Առաջին յօդուածը պատմական բնույթ ունի: Ի՞նչու. Անրուան Հըքիմ անդրադարձած է Հայկական Հարցի արմատներուն, այն ժամանակաշրջանէն սկսեալ, երբ Օսմանեան Կայսրութիւնը կամագ-կամաց տկարացաւ եւ իրբեք արգիւնք, հզօրացուց ռուսական պետութիւնը «Քրիչիւք Գալստրի» ղաշնագրէն ետք սկսեալ անհաճանքներուն մինչեւ Օսմանեան Կայսրութեան մեջ: Ըստ վերոյիշեալ ղաշնագրին, Ռուսիա կը պարտադրէր ինքզինք իբրեւ Օսմանեան Կայսրութեան մէջ արդող ուղղափառ քրիստոնեաներու պաշտպան:

Ի՞նչու. Հըքիմ ընչո՞ւ է, թէ որքան կը սաստկա-

նար ռուսական ճնշումը Օսմանեան Բարձր Դրան վրայ, այնքան կ'աւելնար եւրոպական մեծ պետութիւններուն միջամտութիւնը՝ Օսմանեան Կայսրութիւնը բաժանումէ գերծ պահելու համար:

Այնուհետեւ Հըքիմ անդրադարձած է այն իրողութեան, որ շնորհիւ եւրոպական կարգ մը երկիրներու յի գործ դրած ճիգերուն, Օսմանեան Թուրքիոյ կարգ մը վարչիներ 1830ական թուականներէն սկսան համոզուիլ կայսրութեան ընդհանուր բարեկարգման մտքին ներս:

Այս մտածողութեան շնորհիւ կիրարկուեցաւ Թանգիմարը՝ 1839ին եւ 1856ին հրապարակուած «Հաբը Հիւմէյուն» եւ «Հաբը Մէրիֆ» պաշտօնական գիրքերուն միջոցով, որոնց համաձայն, Օսմանեան Կայսրութեան քրիստոնեայ տարրերը իրենց իրաւունքներով եւ պարտաւորութիւններով կը հաւասարէին իշխող իսլամ տարրին, երեւոյթ մը, որ զօրաւոր հակադարձութիւն կը ստեղծէր իսլամական աւանդական մտածողութեան շրջանակներուն մօտ:

Ա. Հըքիմ կ'ընէ թէ կարգ մը օսմանցիական մտածողութիւններ համոզուած էին բարեկարգումներու կիրարկման անհրաժեշտութեան, այս օսմանեան ընկերութեան անդամներուն շախախիչ մեծամասնութիւնը կ'աշխատէր վիճակները ինքզոյր առարկայ բարեկարգումները:

Ան Հայկական Հարցը տեղադրած է Արեւելեան Հարցին եւ Օսմանեան Կայսրութեան ներս կիրարկուելիք բարեկարգումներուն եւ բոլոր քաղաքացիներուն միջեւ հաւասարութեան

սկզբունքին դէմ տեղի ունեցած հակադրեցութեան ընդհանուր ծիրին մէջ:

Այնուհետեւ յօդուածը կ'անդրադառնայ Հայկական Հարցին միջազգայնացման զանազան փուլերուն՝ սկսելով Սան Սթեֆանոյի ղաշնագրէն՝ հասնելու համար միջին Համալստեան շարժերը (1894էն 1896):

«Նահար»-ի երկրասարգական լաւելուածին մէջ լոյս տեսած երկրորդ յօդուածը Հայ Դատի վերլուծման աշխատանքին մէջ մեկնած է երկու դիտանկիւններէ: Առաջին ներքին յօդուածագիր՝ դոկտ. Անրուան Մէյֆ համեմատած է Լիբանանի եւ Հայաստանի ժամանակակից պատմութիւնները, այսպէս համեմատութիւն մը կատարած է Հայաստանի անկախացման եւ համաշխարհայինացման երեսին գալուն միջեւ:

Անդրադառնալով առաջին կէտին, Անրուան Մէյֆ նոյնութիւններ տեսած է 1861ին Լեռնալիբանանին շնորհուած ինքնավարութեան եւ 1863ին վաւերացուած թրքահայոց Ազգային սահմանադրութեան միջեւ, այն հիմնադրուածով, որ երկու պարագաներուն ժողովուրդը ազատ ընտրութեան իրաւունք կ'ունենար:

Իսկ ինչու միջին Հայաստանի տարածքին լայն տարածում գտան մամուլն ու տընդազգային աշխատանքը, ինչպէս նաեւ արդի կրթական հաստատութիւնները:

Մէյֆ նաեւ համեմատած է Լիբանանի եւ Հայաստանի մէջ օսմանեան տիրապետութեան ժամանակաշրջանին տեղի ունեցած շարժերը, որոնց պատճառով երկու երկիրներէն մեծ թիւով

բնակիչներ գաղթեցին եւ դարձան Սփիւռք: Նկատի պէտք է առնել մանաւանդ, որ Լիբանանէն եւ Հայաստանէն հեռացածներուն թիւը անելի է քան բնակիչներուն թիւը:

Յօդուածը կ'արձանագրէ թէ իբրեւ հետեւանք Խորհրդային Միութեան փլուզման, Հայաստանին շնորհուեցաւ իր անկախութիւնը 21 Սեպտեմբեր 1991ին, զուգահեռ իր երկրներէն համակարգի կործանման եւ միաբեւեռ համաշխարհայինացման հաստատման:

Մէյֆ կը հաստատէ, թէ վերոյիշեալ զուգահեռութիւնը որակական անկիւնադարձ մը հանդիսացաւ Հայ Դատի պայքարի գործընթացին մէջ:

Յօդուածագիր դոկտ. Փատիա Քիւրան անդրադարձած է հայութեան եւ լիբանանեան տագնապներուն անառորութեան: Ան հաստատած է, որ լիբանանահայութիւնը կրցաւ մաս կազմել լիբանանեան ընկերութեան, առանց անուանման մասնակցելու ընկերութեան ներքին հարցերուն: Լիբանանահայութիւնը փորձեց կայունութեան եւ հաւասարակշռութեան գործօնի վերածուիլ լիբանանեան քաղաքացիական պատերազմին ընթացքին:

ԿԻՒՆԱԼ ԱՁԳԱՅ. «ՅԱՆԿԱՅԱԾ ՆԼԴԻՐ ՀՆԱՐԱՌՈՐ Է...» (Շարունակուած 5րդ էջէն)

Պ. - Ես կարող եմ վստահաբար ասել, որ մեր այցելութեան առաջին նպատակը երկխոսութիւն սկսելն է: Հայերէնի եւ թուրքերէնի ուսուցումը կարող է միայն իրանել այդ երկխոսութեան ճիշդ կազմակերպմանը: Երկխոսութիւնը պէտք է ծաւալուի ամէն բնագաւառում՝ ինչպէս պատմական ինքնիշխան կարգաւորման, այնպէս էլ գիտական-մշակութային համագործակցութեան: Առաջիկայում կը կարգավորուի գիտականութեան փոխալցելութիւններ եւ գիտաժողովներ, որոնք հնարաւորութիւն կը տան կարգաւորելու շատ խնդիրներ:

Ը. - Ինչ տեղեւ է կ'էր, որ Կաշնակցութիւնը Կուտակ-ցութեան երկրասարգական թելը բողբոջի մայր է բարձրացրել եւ պահպանում է Թուրքիայի ներս համագործակցել միայն վերջինիս կողմից Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելուց յետոյ: Ի՞նչ կ'ասէք այս կապակցութեան մասին:

Պ. - Այժմ ամէն երկրում էլ կան արմատական կուտակցութիւններ: Ի՞նչ բիւռն է ժողովրդավարութեան սկզբունքներին, եւ ես այդ փաստը դիտում եմ միայն լաւ տեսանկիւնից: Անշուշտ, պէտք է հասկանալ նաեւ երկրասարգութիւնը: Սակայն նրանց բողբոջը, չեմ կարծում, որ կարող է ազդեցութիւն գործել մեր համագործակցութեան վրայ, քանի որ մերը շարժում է կը մեր պետութիւններին որդեգրած արտաքին քաղաքականութիւնից ինչով: Հաւատացում եմ, որ մեր այցելութիւնն առաջին ներքին մեծ ճանապարհ է բացելու այդ խնդրի կարգաւորման համար: Մարդիկ դեռ կը համոզուեն, որ այս համագործակցութիւնը այսպէս կ'համար շատ կարեւոր է: Անկեղծ պէտք է ասեմ, որ ես հայերի նկատմամբ մեծ յարգանք եմ տածում: Անգարայում գնել եմ հողատարածք, որտեղ կար կ'ուտար մի եկեղեցի: Համալսարանի միջոցներով եկեղեցին իր նախագծի համապատասխան վերակառուցել է եւ այժմ գործում է: Եկեղեցու նկարագրով կար գըրադարան, որը նոյնպէս այսօր ծառայում է տեղի հայերին: Ես երջանիկ եմ, որ կարողացաւ պահպանել այդ պատմական շինութիւնը:

Ը. - Թուրքիայի կառավարութիւնը ի՞նչպէս է վերաբերւում մեր Հայաստան կատարած այցելութեանը:

Պ. - Մեք գաւտ եկր մեր հայեացքներով, եւ կարծում եմ, որ կառավարութիւնը միայն կ'ուղեւորի մեր համագործակցութիւնը: Չի բացառում, որ նորաւելի բարձրաստիճանի պաշտօնեաներ առաջիկայում կ'այցելեն եւ կը փորձեն սկսել համագործակցութիւն: Ամէն դեպքում, ես Թուրքիայում կը նույնատեմ դրա իրագործմանը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԴԱՏԻ ԻՐԱՒԱԿԱՆ ԵՐԵՄԻՆ

22 եւ 23 Ապրիլին, «Սաֆիր» եւ «Տիար» թերթերուն մէջ լոյս տեսան Լիբանանեան Համալսարանի դասախոսներ ղոկտ. Քամիլ Հաւաթի եւ դոկտ. Թալալ Թարապայի մասնագիտական յօդուածները Հայկական Ցեղասպանութեան 85ամեակին եւ Հայ Դատի մասին:

Անդրադառնալով Հայկական Ցեղասպանութեան, որ կոչու է Քամիլ Հաւաթի կողմէ, որ վերջին քանի մը տասնամեակներուն ընթացքին, Հայ Դատը վերածուած է մշտական մտային մարզանքի մը, որովհետեւ 20րդ դարու սկիզբը սկսած դատը տակաւին չէ դրուած յունժման ճամբուն վրայ:

Ըստ Հաւաթի, ասոր պատճառը այն է, որ Ցեղասպանութիւնը գործարարող կը մերժէ ճանչնալ իր պատասխանատուութիւնը, հետեւաբար անոր կեցուածքը կը վերածուի ժխտումի (նկկախութիւն) վարչապետութեան մը:

Հատ գտած է, որ գանձազան պատճառներով երրորդ հազարամեակին, Հայ Դատը պիտի մտնէ նոր հանգրուանի մը մէջ: Վերոյիշեալ պատճառներէն կարեւորագոյնները հետեւեալներն են.

Ա. - Քաղաքականութեան ստեղծած «ճրճարտութիւնը» յաւիտենական չէ, այլ՝ յաճախ փոփոխութեան կ'ենթարկուի եւ միջազգային շահերը կը փոխուին:

Բ. - Քաղաքականութիւնը միշտ այ սերտ յարաբերութեան մէջ եղած է ժամանակին հետ, եւ այս յարաբերութիւնը պիտի փոխակապագայ տագնապներուն ընդմիջը:

Գ. - Գլխաւորաբար Արեւմուտքը պատասխանատու է Հայ Դատի ճանաչման մէջ եւ ինք պիտի սկսի շարժիլ այդ դատին յունժման նպաստելու համար:

Հայկական Ցեղասպանութեան գլխաւոր վեց պատճառը նշած է Քամիլ Հաւաթի.

1. - Բացմագրեան կայսրութիւններու փլուզում (Յարական Ռուսիա, Աւստրո-Հունդարական կայսրութիւն եւ Օսմանեան կայսրութիւն):

Բ. - Ազգայնական գաղափարախոսութեան որդեգրումը Երիտասարդ Թուրքերու կողմէ: Անոնք ձգտեցան պետութեան տայ «Թուրքագլին» համապատասխանող նկարագիր. Օսմանեան պետութեան ոչ - թուրք քաղաքացիները նկատեցին իրենց թշնամին:

Գ. - Ազգ - պետութեան գաղափարի ամրացում: Ազգ - պետութիւնը աշխարհիկարգ մը երկիրներուն մէջ դարձաւ մէկ ազգի պետութիւն, որ հետագային կիրարկուեցաւ նաեւ Քեմալական Թուրքիոյ մէջ:

Դ. - Փոքր Ասիոյ մէջ հայկական պետութեան մը ստեղծման մասին խոսող Սեւրի ղաշնագրին «որակեր»: Այս ղաշնագրերը իր մէջ կը կրկնէր իր մահուան սերմերը:

Ե. - Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսոնի «քաղաքական տեսչապաշտութիւն»-ը, որուն պատճառով ան ձախողեցաւ իր սկզբունքներու իրագործման մէջ:

Զ. - Եւրոպական մտքին տարածումը շրջանի երկիրներուն մէջ եւ անոր ազդեցութիւնը շրջանային քաղաքական գործընթացներուն վրայ:

Քամիլ Հաւաթի շարունակած է ըսելով, որ Եւրոպայի միանալու Թուրքիոյ փափաքը իր քաղաքականութեան եւ ռազմավարութեան ճշդման հիմքը դարձաւ: Թուրքիան գիտի, որ Եւրոպական Միութեան միանալը իր մէջ կը պահանջէ յանձնառուութիւններ եւ փոփոխութիւններ՝ իր քաղաքական կեցուածքին մէջ: Սակայն Թուրքիոյ որդեգրած քաղաքականութիւնը կ'արգիլէ անոր ժողովրդավարական երկիր մը վերածումը, որովհետեւ քեմալականութեան ժառանգութիւնը տակաւին կը գերիշխէ իր քաղաքականութեան վրայ:

Հատ ընկերացած է, որ նոյն այդ Թուրքիան տակաւին կը մերժէ ճանչնալ իր պատասխանատուութիւնը «Ջարդերուն» նկատմամբ, ինչպէս նաեւ կը մերժէ բռնագրաւեալ հողերու վերադարձը իրենց բուն տէրերուն՝ պարտաւորելով մարդկային իրաւանց հռչակագրի 17րդ յօդուածը:

Իսկ ինչու միջին Հայաստանի տարածքին լայն տարածում գտան մամուլն ու տընդազգային աշխատանքը, ինչպէս նաեւ արդի կրթական հաստատութիւնները:

Սիւր» թերթին մէջ լոյս տեսած ղոկտ. Թալալ Թարապայի յօդուածը կ'անդրադառնայ Հայ Դատի գուտ իրաւական երեսին, ինչպէս նաեւ՝ եւրոպական կարգ մը երկիրներու խորհրդարաններուն կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցին:

Յօդուածին մէջ համեմատութիւններ կան Հայ Դատի եւ միջազգային այլ հարցերու միջեւ: Թարապայ կ'արտայայտէ այն միտքը, թէ Հայկական Ցեղասպանութեան դատը կարեւոր դեր ունի կողմասի շրջանին մէջ կնքուելիք պայմանագրերուն մէջ:

Ըստ Թարապայի, Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ կայացած իւրաքանչիւր մտտեցումի քայլ կը նշանակէ Հայաստանի կողմէ գիշում Հայկական Ցեղասպանութեան անճշտութեամբ իր ունեցած պահանջներին:

Յօդուածագիրը կը նշէ, որ Հայաստանի իշխանութիւնները վերջերս դիւանագիտական շարժում կ'ընեն, եւ կը յուսան, որ յետայսու Հայկական Ցեղասպանութեան հարցը միջազգային գետնի վրայ քննարկուի:

Ըստ Թարապայի, հակառակ անոր, որ գոյութիւն ունի գաղափարաւորութեան Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչման անճշտութեամբ, այսուհանդերձ տակաւին Հայ ժողովուրդը երկարատեւ եւ դժուարին պայքար ունի իր առջեւ:

Յօդուածագիրը յօդուածը կ'աւարտէ ըսելով, որ թէ եւ պետութիւնները իրենց շահերը ամէն բանէ վեր կը դրան, սակայն հակառակ այս իրականութեան աշխատանքը կը տարուի օրէնքով եւ ոչ թէ շահերով դեկլարուող միջազգային ընկերութիւն մը կ'ընտելու համար:

Նախագահութեամբ ՏԻԿԻՆ ՈՒՆՏԱ ՊԵՐՐԻԻ Կազմակերպութեամբ ԼՕԽ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՀՄԻԿ ՕՐ» Տեղի կ ունենայ Երկուշաբթի, 8 Մայիս 2000, կէսօրը առաջ ժամը 11:00-էն սկսեալ, «Ռիվերա» պանդոկին մէջ, Մանարա: ԵՐԱԵՐ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՏԻ ՎԱՐՉԱՐԱՆ Պորճ Համուտ, Արաբս Փողոց, Հեռ: 01/260504 254938/9, Ֆաքս: 01 262955, Email: mesrobca@dm.net.lb Web page: www.mesrobians.com FOREIGN LANGUAGES, COMPUTER SESSIONS, BUSINESS MAJOR, JEWELLERY DESIGN, HAIR DRESSING, MAKE-UP/COSMETICS, COMPUTER TV & VIDEO REPAIR,... ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՅՐ ԶՈՐՐԵՇԱԲԹԻ 10 ՄԱՅԻՍ 2000 ՅՐԱՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԸ

Մանկապատանեկան

ԿԸ ՆԱԽԱՆՁԻՄ. ՔԻՉ ՄԸ, ՇԱՏ, ԲՆԱԻ...

Կարգ մը բաներ լինելը կը չզայնացնեն կամ կը տխրեցնեն: Արդեօք ասիկա նախանշիչ է:

«Ես եղբորս կը նախանշիմ: Ամեն անգամ, երբ բան մը կը պատահի, զիս կ'ամբաստանեն: Ի՞նչ ընել, որպէսզի այս վիճակը փոխուի»:



ՄՏԱՍԷ...

Յիշէ, թէ ի՞նչը քեզ նախանշուող դարձուց այս վերջին տրեւումը: Երկուշաբթի, հայրը եղբորդ աւելի ամուր համբուրեց, Երեքշաբթի գիշեր մայրը աւելի երկար մնաց անոր սենեակին մէջ, ան հիւրանոցին բազկաթոռին վրայ կարկանդակի կտորներ ձգած է և քեզ յանդիմանեցին...

Պէտք է բան մը ընեն:

Առանց լայկանութեան, ծնողքիդ ըսէ, թէ նուազ սիրուած կը գգամ: Անոնք պիտի մտնին ընդ քեզ: Կրնայ ըլլալ, որ անոնք անդրադառնան, թէ առանց ուզելու քեզ նախանշուող կը դարձնեն: Կրնայ ըլլալ, որ անոնք քեզի նշեն, թէ ուրիշ տրեւումներ կարելի է արձանագործել: Փորձէ խօսիլ նախանշիչ մասին եւ պիտի տեսնես, թէ ան կամաց-կամաց անկարելի պիտի դառնայ:

ԵՐԱՐՈՒ ՆԱԽԱՆՁՈՎ ՔՈՅՐԵՐ ԵՒ ԵՂԵԱՅՐԵՐ

Քոյր-եղբոր միջև նախանշիչ գոյություն ունի. ան յաճախ կը յառաջացնէ երկար վիճարանութիւններ եւ մեծ նեղութիւններ: Կր պատահի, որ յատուկ վայրկեանի մը իւրաքանչիւրը մտածէ, թէ եղբայրը կամ քոյրը իր ծնողքին նախընտրած գաւազն է: «Անոր համար ես նոր հագուստներ, իսկ ինձի կը մնան հինները: Ես պէտք է մաքրեմ սեղանը, երբ ան պտոյտի պիտի երթայ իր ընկերներուն հետ: Միշտ գայն կը շնորհաւորեն եւ գիտակցութիւններ»:

ԵՐԸ ՆԱԽԱՆՁՐ ՔԵՉ ԿՐ ԳՐԳՈՒ

Նախանշիչ շատ գրգռիչ գրգայում մըն է: Ան կը յայտնուի առանց լուր տալու, ջղայնութեան և ականաները սեղմելու կուտայ եւ քեզ կամաց կամաց բայց յարատեւորէն ներսէն կը կրծէ: Դուն բարեկամ ես մէկու մը հետ. յանկարծ, կ'ուզես ունենալ բոլոր անոր ունեցածները (վստահարար քու ունեցածներէդ աւելի լաւ են): Դուն կը գգաս, թէ քեզ նուազ կը սիրեն, քեզի կարեւորութիւն չեն տար: Հոր... Ուշադրութիւն, չպայթիս: Կը բաւէ... հանդարտէ, շնչէ, դուռը մի գոցեր ջղայնանալով...

ՓՈՐՁԱՆՑ ԵՍ

ԳՈՒՆԱԿՈՐ ԱՄԵՉ

Տարբեր գոյներով կաւիւններ տաշէ. գործիքի ամենէն փոքր ծակերուն բաժինը գործածելով: Այս

տիկ շիշերու մէջ դնելու եւ սեղանի զարդեր շինելու համար կամ զանոնք իրաւաբարտի վրայ փակելու համար:

խանցած է ձայնալարերու թրթռացումը: Այս բռնաբարտի շրջափակի մը մօտ: Որքան ձայնը բարձր է, որովհետեւ ան կարելի է զննել:



ստացած փոշիի խառնելու պիտի քանակով աւազի կետ. այս ձեւով աւազը գոյն պիտի ստանայ: Կրը-

կերներ պատրաստելու համար:

ի կը թրթռայ:

ՔՈՅՐԱՆԵՐ



ԵՐԳՈՂ ԹՈՒՂԹԸ

Աշխարհում բոլոր մը գիր ափիղ վրայ: Բեքսը անոր մօտեցրելով անհագարեք է «հունու»: Թուղթը թեթեւօրէն կը շարժի եւ ձեռքը կը գգուէ: Ասիկա բնական է. օղը փու-

ՃԱԿ ԶԵՆՔԸ

Քիչ մը հաստ բուղբով խոյովակ մը շինէ: Զայն ղիբ աշ աչքիդ առջեւ եռանոթը անոր առջեւ գիր ձայն տեսնուի: Մակ մը ձեռքիդ մէջ: Մի վախճար, չես վիրաւորուած... Ասիկա պարզ տեսողական պայտորութիւն մըն է:

նա սաե գոյները իրարու խառնել տարբեր գոյներ ստանալու համար: Այս գունաւոր աւազները կրնան գործածել յըզ-

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ...

(Շարունակուած 4րդ էջէն)

Կեդրոնական Ընտրական Ցանձնախումբը յայտնեց նաեւ, որ Արցախի մէջ գործող քաղաքական կազմակերպութիւնները՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Արմենական կուսակցութիւն եւ Համայնավար կուսակցութիւն, արդէն իսկ առաջարկած են իրենց թեկնածուները:

Ընտրապայքարը արդէն իսկ սկսած է 30 Ապրիլին եւ կրնայ շարունակուիլ մինչեւ ընտրութեան երկու օր առաջ՝ 16 Յունիս: Այս ժամանակաշրջանին բոլոր թեկնածուներն ալ հաւասար պայմաններով կրնան օգտուիլ պատկերասփիւռին, ձայնասփիւռին, ինչպէս նաեւ անվճար կերպով՝ պետական մամուլին:

STUDIO Lantern logo and contact information: Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ Ըն. 01-266866 ԵՆ 03-895399

ՀԵԾԻԿՈՎ ՊՏՈՅՏ


Գարուն է: Ժամանակն է բնութեան մէջ հեծիկով երկար պտուղներուն: Սակայն ի՞նչպէս գարգացած է հեծիկը մինչեւ ստանալ իր ներկայ արդի կերպարանը:




1817 - Նախաւայրը: Հեծիկը հնարողը՝ Տրեւիսը Է իրարու ետեւ ամրացուած երկու անիւներ ունեցող իր կառքով: Սակայն ան կ'անդրադառնայ, թէ շնորհիւ դէպի մը կրնայ իր կառքը վարել իր ուզած ուղղութեամբ:



1861 - Առաջին ոտակները: Այս հեծիկին նորութիւնը, առջեւի անիւնի վրայի ոտակները:



1870 - Մեծ անիւնը: Այդ շրջանին սարգիսկ կը կարգին. քաղաքացիները արդէն աւելի մեծ ըլլան, ամբողջ հեծիկը արդի կերպով կ'ընթացայ:



1879 - Շոթլանդի կ'աւելնայ: Վերջապէս, մեր հեծիկին նմանող հեծիկ մը: Շոթլանդ կը հաստատուի. եւ ոտակները երկու անիւներուն միջեւ կը գետեղուին:



1890 - Բոլոր միտին Արգենտինայի եւ արաւուրեան լճակները կը յայտնուին: Վերջապէս, կարելի է գառի վերնեքը բարձրանալ: Հեծիկը հանելի ժամանակ կը պարգեւէ: Բազմաթիւ արտոններով հեծիկը կը յայտնուի. կարելի է հեծիկը բռնել 10-12 հոգիով:



20րդ դար - Օգտակար հեծիկը: Նամակաբաշիք, նոյաբաշիք, արձակուրդի գառնուղիները... Հեծիկին «արտեստը» կը զարգանայ եւ կը դիւրացնէ տեղափոխումները (եւ զբաղումները):

Իսկ շարունակութիւնը... Քեզի ծանօթ է լեռնային հեծիկները, շարժանկները, սրուրները: Մօտաւորապէս երկու հարիւր տարուան կեանքէ ետք երկու անիւները տակաւին կ'որ կը դառնան...


ԺԱՄԱՆՅ



Կրնա ս գտնել իրարու նմանող երկու տուփիկները:



Կրնա ս գտնել այս գաղտնի ոտակահին եւ իր շուքին միջեւ գոյութիւն ունեցող 6 տարբերութիւնները:



Կրնա ս գտնել ելքի ճամբան:

Պատրաստեց՝ ԸՈՂԻԿ ՏԷՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՌԻՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Ժուրիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ տօնախմբութիւնը տարիներու աւանդութեամբ Նոր Կիրակի կը տօնուէր (Ս. Զատիկի յաջորդ Կիրակին): Այս տարի բացառաբար Անուանակոչութեան եւ Մատաղօրհնութեան տօնակատարութիւնը արժանի շուքով պիտի կատարուի 7 Մայիս 2000՝ Աշխարհամատրան Կանաչ Կիրակի օրը: Ուստի նուիրատու ազգայիններու կը թելադրուի իրենց արտաբերի՝ ոչխար, կիւրակաւ եւ այլ նուէրները փութացնել եկեղեցւոյ բաղակաւորութեան կամ հեռախօսի հետեւեալ թիւերուն՝ 03-302439, 03-762880, 04-402260 եւ 03-717079: ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԺՈՒՆԻԷՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԶԱՆԳԱՅԻ ԵՒ ՇՐՁԱԿԱՅԻՑ

ԺՈՒՆԻԷՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Ժուրիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ թաղականութիւնը, կու գայ յայտարարելու թէ, յառաջիկայ Կիրակի, 7 Մայիս, 2000, որ կը պուգադիպի Կանաչ Աշխարհամատրան Կիրակին, պիտի նշուի եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը: Նոյն առիթով տեղի պիտի ունենայ մատաղի օրհնութիւն եւ եկեղեցւոյ նորակառոյց ղոններուն, արբանկարներուն, մուսավառներուն եւ իսաչքարի օծում:

Դիտի պատարագ եւ պիտի քարոյզ թեմիս ստաշնորդ
ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
Սկիզբ ժամերգութեան՝ Ժամը 7:30ին
Ս. պատարագ Ժամը 9:30ին
Օծում եւ օրհնութիւն՝ Ժամը 10:30ին
Բարոյ՝ Ժամը 11:00ին
Մատաղ օրհնէք Ժամը 12:00ին
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԺՈՒՆԻԷՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

